

Ո՞վ է, Ի վերջո, ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿԸ

ՇԱՎԻՎ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ակամա վեճերի և բազմաթիվ թյուր ըմբռնումների տեղիք է տվել Նահապետ Քուչակի անունը, Հիրավի: Ո՞վ է Նահապետ Քուչակը և ի՞նչ ծառայություն է մատուցել մեր գրականությանը: Այս հարցով ահա շուրջ հարյուր տարի անընդմեջ զբաղվում է հայ բանասիրությունը, բայց առայժմ չի ակնկալվում հարցի գիտական, սպառիչ լուծումը: Թվում է, թե սրանից քառորդ դար առաջ Աս. Մնացականյանի՝ «Հայրենիների և Նահապետ Քուչակի մասին» հոդվածը¹ պիտի վերջ դներ քուչակյան պրոբլեմին, մանավանդ, որ դրան հաջորդեց Ս. Եգանյանի հրապարակումը²: Սակայն, որքան էլ համոզիչ էին նրանց փաստարկները, վերջին երկու տասնամյակների ընթացքում գործնական քայլեր չընկատարվեցին լիբրնականապես ձեռքազատվելու քուչակյան դիլեմայից: Եվ գալստիկ դրությամբ՝ Նահապետ Քուչակն իրազեկվում է ոչ թե իրեն հատկացված համեստ տեղը հայ աշուղական գրականության մշակների շարքում, այլ շարունակում է վախճել իրեն վերագրված փառքը: Եվ դեռ գնալով ավելի ու ավելի շեղ են դառնում քուչակյան հրատարակությունները³ և սովելի կրթչոտ՝ հրապարակային ելույթները⁴:

Նահապետ Քուչակի անձնավորության վերաբերյալ դոյություն ունի ընդամենը երկու քիչ թե շատ հավաստի տեղեկություն: Մեկը Արիստակես Սարգսյանի վ. Տեկանցի վկայակոչած հիշատակարանն է, իսկ մյուսը Քուչակի հայրենի խառակոնիս գլուխի ս. Թեոդորոս եկեղեցու բակում գտնված գերեզմանաքարի սակավագիր հետևյալ արձանագրությունը. «ՍԱ ԱՐԵՎ ՔՈՒՉԱԿ ԹՎ. ԻՒՆԱ ՅՇ ՔԱՍ՝ ՆԱԽ՝ հիշատակարանը: Արիստակես վ. Տեկանցը «Հայերգ» ժողովածուում⁵, թվելով Գ. Նարեկացուց մինչև Քուչակն ու Պետրոս Ղափանցին ընկած հարյուրամոր բանաստեղծների անուններ և, առանձնացնելով նրանցից հատկապես իր երկու հայրենակիցներին, Քուչակին և Գր. Աղթամարցուն, մեջբերում է նրանց վերաբերյալ կենսագրական բնույթի մեկական հիշատակարան: Դժբախտաբար, վարդապետ բանասերը չի նշում դրանց սկզբնաղբյուրները, թեև կասկածից վեր է, որ դրանք իրեն տրամադրել է իր մի այլ հայրենակիցը՝ տեղ Դևոնդ Փիրզալամյանը, ուրի մասին Տեկանցն, ի դեպ, այսպես է

¹ «Պատմա-բանասիրական հոսիցես», 1958, № 2:

² Օ. Եգանյան, Նահապետ Քուչակի հայատառ թուրքերեն տաղերը («Բանբեր Մատենադարան», 1960, № 5, էջ 465—481):

³ Վերջին երկու տասնամյակների ընթացքում լույս են տեսել՝ «Айреных» (стихи). Ереван, 1968, «Айреных», М., 1972, «Հազար և մեկ հայրեն», Երևան, 1978, «Հազար և մեկ հայրեն», Երևան, 1979, Մ. Մկրտչյան, Հայ գրականության պատմություն, Երևան, 1982 և այլն:

⁴ Քուչակին վերագրված տաղերի ռուսերեն հրատարակության աղթիվ տպագրած մի գրախոսականում կարդում ենք. «Թեզ գիտնականները վիճեն՝ դա նա՞ Լ, որ ապրել է խառակոնիսում, թե՞ նա, որ ապրել է Ակնում: Իսկ գուցե այդ հայրենները մեկը չի հորինել, գուցե հորինել են մի քանիսը, շատ մարդիկ, գուսանները: Հետազոտությունների մեջ ժամանակ առ ժամանակ ցանկություն է առաջանում մեկ հզոր հեղինակի ստեղծագործությունը վերագրել շատերին... Ես ասում եմ չեմ հավատում, որ մի քանի գուսան են: Դա մեկ Նահապետ է Ափսոս, իհարկե, որ նրա անկետայում գրված լին «Ժենդյան թիվն» ու «Բենակավայրը» («Գարուն», № 1, 1978):

⁵ «Հայերգ», Մեղեդիք, տաղք և երգք, հավաքեց և հրատարակեց Արիստակես վարդապետ Տեկանց, Թիֆլիս, 1882, էջ ԺԳ:

մանրամասնում. «...տէր Ղեոնդ մեղուաջան վարդապետն, որ գրեթէ քսան երկար տարիներէ ի վէր աշխատե՛ր է ժողովել հազարաւոր յիշատակարանք...»⁶, Այս ցուցումից բացի, վերոհիշյալ հիշատակարանների վերջում Տեկանցը շատ որոշակի հղում է՝ «Տես ի յիշատակարան հ. Ղեոնդ վարդապետի Փիրղալամյան Տոսպացոյն»⁷, Այժմ Մ. Մաշտոցի անվան մատենադարանում է գտնվում Ղ. Փիրղալամյանի կազմած՝ «Նշխարք պատմութեան հայոց» խորագրով հիշատակարանների այդ ժողովածուն⁸, որի 211ա էջում է գետնիված խնդրո առարկա վավերագիրը։ Սույն հիշատակարանը Տեկանցն ընթերինակել է կրքոճառ և մի փոքր էլ «խմբագրված»։ Դրանից էլ «աղբվել են» Մ. Արեղյանը, Ա. Զոպանյանը և ուրիշներ, ի դեպ, բանասերներից ոչ մեկն էլ այն ճիշտ չի ընթերինակել։ Որտեղի՞ց է վերցված, օրինակ, կրտսեր Քուչակի կողակցի՝ Թանգ-խաթունի անունը կամ՝ 1637 թվականը, երբ առաջինը չկա Փիրղալամյանի մոտ, իսկ երկրորդի համար էլ պարզ գրված է ոչ թե 1622, այլ 1642 (1617 թ.), իրավացի է, թերևս Ար. Ղազինյանը, որ չափածո է ընթերցում հիշատակարանի առաջին պարբերությունը, բայց սխալվում է, երբ այն վերագրում է թոռ կամ ծոռ Քուչակին, որովհետև հիշատակարանի հեղինակը Ստեփանոս Զուլայեցի է։ Ահա այդ հիշատակարանը՝ ըստ Ղ. Փիրղալամյանի. «Փառք ամենասուրբ երրորդութեան... Քուչակ անուն բարի մտական և ստացող եղբալ սորան... Դարձեալ յիշեցէք գրուչակըն և զմեծ պապն իւր Նահապետ վարպետն, որ մականուն աշըղ (երգիչ—Ղ. Փ.) Քուչակ ասի... (բազում հոգեկցոյց և խրատական երգս յօրինեալ է սա—Ղ. Փ.)... Դարձեալ յիշեցէք զՔուչակն, որ ստացաւ զսա, և ետ ի դուռն սուրբ Թեոդորոս զորավորին (հառակոնիս գեղջն—Ղ. Փ.) և ի ձեռն տէր Մելիքսեթին... ի թուին 1642 (1617), և ես Ստեփանոս զուլայեցի նաղաշ երէցս հանդիպեցայ (ի—Ղ. Փ) հառակոնիս (և—Ղ. Փ) գրեցի հիշատակարանս»։

1869 մայիս 14, չորեքշաբթի ի Վան
հառակոնիս»։

Սա հիշատակարանի առաջին և կարևոր մասն է, որին հաջորդում է Տեկանցի միջանկյալ բացատրությունը, թե՛ «հառակոնիս բազմահայ գյուղ մի է ի Տոսպ գավառն Վասպուրականի, Արջակա լճակին արևելյան եզրն, և Քուչակ աշըղին ու յուր պապ Նահապետ վարպետ աշըղին սեփական գլուղն է, տրք թոռն և պապիկովն միասին հոն թաղված են, և գերեզմանին իբրև ուխտատեղի համարված է տեղացիոցմեծ»⁹։ Ապա հետևում է հիշատակարանի երկրորդ մասը, որ այլևս բառացի չէ։ Վ. Տեկանցը հիշատակարանի այս և հետագա հատվածի բովանդակությունն է շարադրել։ Նա ինքն է գրում թե՛ «Այս ծովական գիշերն ի բուն երգն՝ Նահապետ վարպետ Քուչակինն է, որ օրինակած է 1642 (1583) ի Սեբաստեա...»

Իսկ «Կիւղէլ մի ես «Իյակիրիէ տեսի», այն Նահապետ Քուչակի թոռն Քուչակին է, որ այլք անանուն Ստրկավադիմ կուտան, թերևս չգիտնալով, և սույն վերջին Քուչակ աշըղն ունի շատ երգեր, որ պատեհություն չունեցանք զանոնք ձեռք բերել այս անգամիս»¹⁰։

Ահա այն ամենն ինչ ուղղակի և անուղղակի ասել են հիշատակարանն ու Ա. Տեկանցը Նահապետ և թոռ Քուչակների մասին, մնացած ամեն ինչ ավելացրել կամ հորինել են Քուչակի անձով և գործով զբաղվող հետագա մասնագետները։

Կա, ուրեմն, ընդամենը երկու սկզբնաղբյուր՝ արձանագրությունը և հիշատակարանը։ Արձանագրության գոյության մասին առաջինը խոսել և այն

6 Նույն տեղում։

7 Նույն տեղում։

8 Այն առաջինը քննության առարկա է դարձրել և հրատարակել բանասեր Ար. Ղազինյանը («Գարուն», 1979, № 3)։

9 «Հայերգ», էջ ԺԳ։

10 Նույն տեղում։

գիտական շրջանառության մեջ է դրել Աշխարհբեկ Քալանթարը: Ճիշտ է, Ա. Տեկանցը, հորմյան Հայրիկը, Ն. Զարյանը նույնպես հավաստում են Քուչակի անունով գերեզմանաքարի գոյությունը խառակոնիսի հանգստարանում, բայց առաջին անգամ այն լուսանկարել ու հրատարակել է Ա. Քալանթարը: Քուչակի գերեզմանաքարը, ինչպես վերը նշեցինք, ունի հետևյալ արձանագրությունը. «ՍԱ ԱՐԵՎ ՔՈՒՉԱԿ ԹՎ. ՌԽԱ ԶԵ ՔՍ»: Տառաթիվը՝ ՌԽԱ, Քուչակի մահվան թվականն է՝ 1592: Հանգուցյալի անունը՝ «Նահապետ», չկա: Դրա փոխարեն կա՝ «Սա արև»: Աբեղյանն այդ առթիվ խորհում է. արդյոք սխալ ընթերցում չէ՞ «Նահապետ» կամ «շատ արև» բառերի: Ամենից առաջ նկատենք, որ Քալանթարի՝ վերը հիշատակած լուսանկարը պահպանված չէ: Առկա վիճակում արձանագրության կարևոր մասը Քուչակի սևվան հիշատակությունն ու մահվան թվականն է՝ ՌԽԱ: Սրանով որոշակի է դառնում, որ սույն շիրմաքարը անվերապահորեն Քուչակինն է, այն Քուչակինը, սակայն (պապ, թե՞ թոռ), որ վախճանվել է 1592 (ՌԽԱ) թվականին, ուրեմն՝ պապ Քուչակինը: Այս Քուչակի Նահապետ և մեծ պապ լինելն էլ իմանում ենք Զուղայեցու հիշատակարանից՝ «Դարձեալ յիշեցէք զՔուչակին և մեծ պապն իւր Նահապետ վարպետն»: Կոստանյանը հաշվում է, որ եթե «...Նահապետ» պապի հայրը կամ պապի պապն է (այլ ոչ հոր կամ մոր հայրը), այն ժամանակ կհետևի, որ նա ապրել է ԺԶ դարի սկզբներում...»¹¹: Հաշվարկը ոչ միայն ճիշտ, այլև մի աննախադեպ կոհանում եղավ, երբ տարիներ հետո լուսանկարվեց աշուղի գերեզմանաքարը մեծ Քուչակի մահվան թվականով՝ ՌԽԱ—1592՝ XVI դարու իսկ կրտսեր (թոռ կամ ծոռ) Քուչակն ապրել է արդեն XVII դարում: Համենայն դեպս՝ 1617 թվականին է նա այդ հիշատակարանը հանձնել ս. Թեոդորոս եկեղեցուն: Ուրեմն, իրենց պարած ժամանակաշրջաններով քուչակները բաժանվում են միմյանցից: Այս հանգամանքը չի կարելի աչքի առաջ չունենալ նրանց վերագրվող ստեղծագործությունները վերլուծելիս:

Հաջորդ կարևոր վկայությունը վերաբերում է Նահապետ Քուչակի աշուղ լինելուն (ճոր մականունն աշղ Քուչակ ասին): Քուչակն, ուրեմն, ոչ թե տաղերգու, առաջապես կամ բանաստեղծ է, այլ՝ աշուղ: Այս է 1617 թ. եկեղեցուն պահ տված հիշատակարանի բովանդակությունը: Մնացածը, ինչ որ ասվում կամ վերագրվում է Նահապետ Քուչակին, հետագա հավելումներ են, երբեմն հավանական, երբեմն էլ թյուր և անվավեր: Այստեղ ամեն ինչ սկիզբ է առնում, անշուշտ, Տեկանցից: Այդ նա է, որ 1882 թվականին, առաջին անգամ խոսելով միջնադարյան հայրենների և Նահապետ Քուչակի կապի մասին, մեզ անհայտ աղբյուրների հիման վրա, հարյուրից ավելի հայրեններ վերագրել է նրան: Կոստանյանը, Ն. Ակիսյանը, Ա. Զոպանյանը, Գ. Ասատուրը, Մ. Աբեղյանը, Հ. Թաղևոսյանը, Մ. Մկրյանը, Ա. Ղուկասյանը, Աս. Մնացականյանը և ուրիշներ ամենատարբեր կողմերով վերլուծել, վերաբաժարել են Տեկանցի վկայությունը: Ասենք միայն, որ նրանց ճշող մեծամասնությունը, որոնց թրվում և տողերիս հեղինակը, հակված են կարծելու, որ՝ քացաճակապես անհիմն է Տեկանցի վկայությունը: Եթե իրոք նրա ձեռքի տակ եղել է այդ բանը հաստատող որևէ գրավոր աղբյուր, ապա ինչպես է, որ այն չի հիշատակել: Տեկանցի վկայվողած Հիշատակաբանում ոչ մի խոսք չկա «Այս ծովակա...» տաղաձառի մասին, առավել ևս այն մասին, թե նրա հեղինակը Նահապետ Քուչակն է: Չնայած Տեկանցը երկրորդ հիշատակարանի բնագիրը նույնությամբ չի վերարտադրել, այլ միայն բովանդակությունն է շարադրել, միևնույնն է, եթե այնտեղ այդ մասին որևէ ակնարկ լիներ, անշուշտ կնշար: «Կարելի չէ ընդունել,— նկատում է Մ. Աբեղյանը,— թե նա հենց այդ մասին կրկին, եթե այդ հիշատակարանի մեջ հաղորդված լիներ, թե տողաշարքը Նահապետինն է»¹²:

Բայն այն է, որ Տեկանցն ինքն էլ ժողովածուն կազմելիս հայրենների շարքը չի դրել Քուչակի անվան տակ, ինչպես ժողովածուի մնացած բոլոր նյութերի հետ է վարվել: Աբեղյանն այս հանգամանքը լուրջ կովան է դարձնում,

11 Կ. Կոստանյան, Նոր ժողովածու, պրակ Ա, Թիֆլիս, 1892, էջ 68:

12 Մ. Աբեղյան, Նրեներ, հ. Բ, Նրևան, 1967, էջ 20:

ասելով, թե ինչպես է, որ ամբողջ ժողովածուի նյութերը ներկայացվել են ըստ հեղինակների, ինչպես ասենք՝ «Խաղ ի ներսեսէ», «Երգ ի Յովհաննէս Թլկուրանցույ», «Տէր Սադաղայ», «Ներսէս Կլայէցի», «Տաղ Յրկան ասացեալ» և այլն, իսկ այս միակ դեպքում՝ ոչ խորագրում և ոչ էլ տաղերի վերջում, չի հիշվում հեղինակը։ Արեղյանը եզրակացնում է, որ նա այդ տաղաշարքն, ուրեմն, անանուն է խմացել։ Եվ երբ ժողովածուն կազմելուց հետո հարկ է եղել նախաբան գրել, նախաբանի վերջում միայն, այն էլ ծանոթագրության մեջ, հենց այնպես, առանց սկզբնաղբյուրը հիշատակելու, հայտարարել է, թե «Այս ծովական շարքը Նահապետ Քուլակինն է... Այսպիսով, — եզրակացնում է Արեղյանը, — Տեկանցի հաղորդած տեղեկությունը չի հիմնված որևէ ձեռագրի վրա և մոտ է լուի խոսք»¹³։

Իսկ ի՞նչ կարելի է ասել թոռ կամ ծոռ Քուլակի մասին։ Ծոռ Քուլակի մասին խոսողը դարձյալ ոչ թե հիշատակարանը, այլ Ա. Տեկանցը ինքն է։ Հիշատակարանից երևում է, որ այս կրտսեր Քուլակն ապրել է XVII դարում, համենայն դեպս 1617 թ. է գրված նրա վերաբերյալ Ջուղայեցու հիշատակարանը։ Ուշագրավ է, որ սրա աշուղ լինելն էլ Ջուղայեցուց չէ, որ իմանում ենք։ Տեկանցն է նրան աշուղ համարում։ Իսկ իրականում նա ոչ թե աշուղ, այլ, թերևս, տաղասաց է։ Նախապետին վերագրվող ճայեբեմ երկու երգերն էլ մեք կարծիքով սրանն են։ Խոսքը Մաշտոցյան մատենադարանում № 1640, 1536, 2079, 2566, 7717 և Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 176 ձեռագրերում պահվող՝ «Գովասանք Սուրբ Աստուածածնին ի վանեցի Քօշակէ ասացեալ» տպագրի և № 7707, 3422 ձեռագրերում պահվող «Գովասանութիւն... սուրբ Կարապետին» տակավին անտիպ տաղերի մասին է։ Այս տաղերից բացի, կա առավել հետաքրքիր մի ուրիշ՝ դարձյալ բավական վեճ հարուցած խաղ ևս, որի մասին Տեկանցը նկատում է. «Իսկ Կիւզել մի ես Իյակիրիէ տեսի», այն Նահապետ Քուլակի թոռն Քուլակինն է, որ այլք անանուն Սարկավազիմ կուտան...»¹⁴։ Հատկապես կամենում ենք նշել այս տաղը, որովհետև սա միակ ստեղծագործությունն է, որի մասին, որպես հավաստի ճշմարտության, թոռ Քուլակին վերագրելով, վկայակոչում է Տեկանցը, և որը սակայն, ինչպես ժամանակին ցույց է տվել Աս. Մնացականյանը, ոչ թե Քուլակինն է կամ Սարկավազ Բերդակեցունը, այլ XV դարի վերջերին ստեղծված և հետագա դարերում «զարգացում» ապրած ժողովրդական երգ է (ավելի ճիշտ երգերի մի առանձին տարբերակախումբ)։ Այս երգի որոշ տարբերակներ առաջին անգամ տպագրվել են դեռևս XVIII դարի տաղարան-շարականցներում, իսկ հետո Գամառ-Քաթիպայի երգարանում¹⁵, որտեղից այնուհետև արտատպվել է «Քնար հայկական»-ում¹⁶։ Զետեղելով իր ժողովածուի մեջ սույն երգը, Տեկանցը, ինչպես ասացինք, աներբր ծանոթագրել է. «Իսկ Կիւզել մի ես Իյակիրիէ տեսի» երգը Նահապետ Քուլակի թոռն Քուլակինն է...»¹⁷։ Հավանաբար Տեկանցն այս ծանոթագրությունն արել է իր ձեռքում եղած ինչ-որ աղբյուրի հիման վրա։ Ուշագրավ է, որ այս հարցում առավել հեղինակավոր մասնագետները (Ա. Զոպանյան, Մ. Արեղյան, Աս. Մնացականյան) համակարծիք են։

Ի մի բերելով «Կօջալ մի ես երեկ տեսայ» երգախմբին պատկանող (և գոյություն ունեցող) բոլոր տարբերակները, Աս. Մնացականյանը եկել է այն եզրակացության, որ դրանց հիմքում ընկած է իրական մի դեպք՝ բյուզանդական գահաժառանգ Ջուլա (Սոֆիա) Պալեոլոգի ամուսնությունը ռուսական ցար Իվան 3-րդի հետ, որը տեղի է ունեցել 1472 թվականին՝ Իտալիայում։ «Հետեվաբար սույն գործը, — գրում է բանասերը, — կարող էր... ծնվել և ձևակերպ-

13 Նույն տեղում, էջ 21։

14 «Հայերգ», էջ 69։

15 «Ազգային երգարան հայերգ», աշխատասիրեց Գամառ-Քաթիպա, ՍՊԲ, 1856, էջ 85—87։

16 «Քնար հայկական», խմբագրեց Մ. Մ. Միանասարյան, ՍՊԲ, 1868, էջ 167։

17 «Հայերգ», էջ 69։

վել միայն 1472 թ.՝ քիչ հետո ընկած առաջին տարիների ընթացքում»¹⁸։ Այնպես որ՝ սույն երգի ոչ թե հեղինակները, այլ մշակողներն ու տարածողներն են եղել կրտսեր Քուլալն ու Սարկավազ Բերդակեցին կամ Կիրակոս Երեցն ու Մեկ Պատիկ Հայր, մանավանդ վերջինս, որ աչրել և ստեղծագործել է կրտսեր Քուլալից էլ հետո՝ XIX դարում։ Տեկանցն հավանաբար իր ձեռքի տակ ունեցել է վերոհիշյալ երգի՝ Գամառ-Փաթիպայի հրատարակածից զանազանվող մի այլ տարբերակ, որի վերջին տան մեջ հիշատակվել է Քուլալի անունը, որպես թե երգը նրանն է։ Բայց չէ՞ որ Տեկանցին հայտնի են նույն այդ երգի նաև այլ՝ անգամ տպագիր տարբերակներ, որոնցում երգի հեղինակը համարվել է անանուն մի սարկավազ, ինչպե՞ս նախ Տեկանցը, իսկ հետո էլ հիշյալ երգերի ճակատագրով զբաղվող մյուս մասնագետները չեն նկատել, որ երգի վերջին տան տեկանցյան հավելումը ոչ միայն բռնաձիգ, այլ բոլորովին անհարիր է ամբողջական տեքստին։ Մինչդեռ անանուն սարկավազին (Սարկավազ Բերդակեցուն) վերագրվող ավարտական տողերը օրգանական շարունակությունն են բուն երգի և որպես այդպիսին չեն կարող կասկած հարուցել։

Կա մի շատ կարևոր կտման էլ, որ վերիպել է բանասերների ուշադրությունից։ Սարկավազ Բերդակեցին իր երգում թվում է բազմաթիվ քաղաքների անուններ՝ Սելանիկ (Սալոնիկ), Խալաթիա, Մար, Պադուատ, Պասաբ, Սիս, Շամ, Ամասիա, Հոռմ, Երուսաղեմ, Դավրեժ, Խորասան, էրզրում, Կենճե և վերջընթեր տան մեջ ամփոփելով կցում՝

Սարկավազ ասող բանիս

Յինքենէս խիստ առատացայ,

Ձայս չափ Բաղաֆենբա ամեն (ընդգծումը մերն է՝ Շ. Գ.)

Կիւղալի մի տրւի ճապայ։

«Ձայս չափ քաղաքներս ամեն» տողը իսկապես որ տրամաբանորեն ամփոփում է երգի նախորդ տների իմաստը, մի բան, որ չկա Տեկանցի տարբերակում։ Եվ ոչ միայն այդ։ Ինչո՞ւ պետք է «քաղաքներով զարդարված» այդ երգը նման՝ միանգամայն տրամաբանական ավարտի փոխարեն, թե «Ձայս չափ քաղաքներս ամեն Կիւղալի մի տրւի ճապայ», անկապ և անիմաստ ավարտվեր այսպես՝

Յս Քուլալն եմ վանեցի...

Ի գեղէն Խառակոնիսայ...

Իրոք որ բռնաձիգ է։ Այդ դեպքում մի՞թե Քուլալի անվամբ մեզ հասած այդ երգի ավարտական հատվածը գոնե իրեն՝ Քուլալինը չէ։ Քուլալինն է, այո՛, բայց ոչ թե այդ երգի, այլ իր՝ Քուլալի գրչին պատկանող մի այլ՝ մեզ չհասած կամ չպահպանված տեքստի։ Դուրս է գալիս, որ Քուլալն էլ, Սարկավազն էլ ունեցել են նույն այդ երգի կամ թեմայի սեփական մշակումներ, որոնցից մեկը փրկվել և նույնությամբ հասել է մեզ (Բերդակեցի), իսկ մյուսի (Քուլալ) միայն ավարտական տունն է պահպանվել՝ մի այլ տեքստի շարունակություն դառնալով։ Մի այսպիսի, բայց արդեն զգալիորեն ուշ շրջանի մշակում էլ Կիրակոս Երեցին ու Մեկ Պատիկ Հայինն է (վերջինս բավական հեռացել է մեզ արդեն ծանոթ տեքստից)։ Եզրակացությունը մեկն է՝ «Կօզալ մի ես երեկ տեսայ» երգը ոչ թե Քուլալինն է կամ Սարկավազ Բերդակեցունը, այլ ավելի վաղ շրջանում (XV դարի վերջին տասնամյակներ) ստեղծված ժողովրդական մի երգ, որ հետագայում ունեցել է բազմաթիվ մշակումներ։

Այժմ ամփոփենք մեր միտքը։ Եթե Տեկանցը քառացի գրում է, թե «Կիւղէլ մի ես...» երգը նահապետ Քուլալի թոռանն է, բայց փաստերը և տրամաբանությունը հերքում են այդ, ինչո՞ւ պետք է կասկածի տակ շառնել Տեկանցի լուկ

¹⁸ Ա. Մ. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 565։

խոսքով արած նաև այն հայտարարությունը, թե «Այս ծովական գիշերն ի բուն» շարքը Նահապետ Քուլակինն է։ Բարեբախտաբար, Քուլակի անձով և ստեղծագործությամբ զբաղված համարյա բոլոր մասնագետներն էլ կասկածով են նայել Տեկանցի վկայությանը և քանի խորացել, այնքան ավելի են համոզվել, որ Նահապետ Քուլակը ոչ մի կապ չունի իրեն վերագրված «Այս ծովական գիշերն ի բուն» տաղաշարքի, ուրեմն և միջնադարյան հայրենների հետ։

Հակառակ այս իրողություն, սակայն, շարունակում է հարատևել լեգենդը՝ նվազագույն իսկ հող, հիմք չունենալով իր ոտքի տակ։ Այդ բանում մի ավելորդ անգամ համոզվում ենք, երբ խնդրին նայում ենք հակառակ ծայրից։ Եթե Քուլակը ինքը չի առնչվում հայրեններին, հնարավոր է արդյոք, որ իրենք՝ հայրենները առնչվեն Քուլակի հետ։ Հարցին այս կերպ մոտեցել են իհարկե նաև անցյալում (Կ. Կոստանյան, Գ. Ասատուր, Ա. Չոպանյան, Ն. Ակինյան, Հ. Քյուրդյան, Մ. Արեղյան)։ Բայց նրանցից և ոչ մեկը այդ խնդրին այնպես չի դրել, ինչպես Աս. Մնացականյանը։ Նրանք բոլորն էլ կասկածով ու վերապահաթյամբ են խոսել Քուլակի մասին և նրա անունը հայրեններին կապել են, բնավ էլ հավատացած չլինելով, որ նա է այդ տաղաշարքի հեղինակը։ Ահա թե ինչ է գրում Կ. Կոստանյանը. «...ինչ որ կվերաբերի Նահապետի անունով հայտնի երգի մյուս մասերին, կարող ենք ասել, որ նոքա առհասարակ ժողովրդական երգե առած կտորներ են, և Նահապետն իսկապես ժողովրդ է այդ մասերի, այլ ոչ հեղինակ»¹⁹։ Գ. Ասատուրի կարծիքով «այդ երգերի վերագրվելը Նահապետ Քուլակին պետք է համարել վաղաժամ և ստուգության կարոտ»²⁰, իսկ Արշակ Չոպանյանի մոտ կարդում ենք. «Ես ինքս, Նահապետ Քուլակի դիմանք հատորի ներածության մեջ, ինչպես և անկից ի վեր այդ քուլական բանաստեղծության նվիրված մեկ քանի գրվածքներու մեջ, միշտ հայտնած եմ, թե ազդիկներու այդ որոշ շարքը Նահապետ Քուլակին վերագրելու համար Տեկանցի հայտարարությունն ուրիշ փաստ չունի, և բացատրած եմ նաև թե ինչու՞ այդ շարքը մեր ժողովրդական հին անանուն երգերուն մեկ բաժինը նկատելու և... օտար հասարակությանց ալ ներկայացնելու տեղ՝ կնախընտրեմ Նահապետ Քուլակ անունին կառել...»²¹։ Ավելի որոշ՝ «Անհնար է, որ ասունց հեղինակն ըլլա վանցի Քուլակը, ինչպես կհայտարարե Կ. Տեկանցը...»²²։ Հ. Քյուրդյան՝ «Կշարունակեմ զանոնք Քուլակյան անվանել միմիայն հետևելով ընդունված կանոնին»²³։ Ն. Ակինյանը ևս համոզված էր, որ հայրենների ծագումը ավելի վաղ է, քան XIV դարը և որ նրանց հետ ավելորդ է առնչել «պարզունակ» աշուղ Քուլակի անունը։ 1963 թ. լույս տեսած «Սայաթ-Նովա» մենագրության մեջ Պ. Սևակը ևս մեջբերումներ կատարելով հայրեններից, ավանդույթի ուժով և լոկ պայմանականորեն է դրանք հիշատակում Ն. Քուլակի անվամբ։ Հիշատակում է, այո, բայց և ցավով նկատում, որ հայ ժողովրդի ստեղծած այդ «հրաշալիքները», «որ այժմ վերագրվում է Ն. Քուլակին» փաստորեն չի առնչվում նրա անվանը։ «Քուլակ անունը,— գրում է Պ. Սևակը,— օգտագործում ենք պայմանական իմաստով, իբրև համարժեք «հայրեններ»-ի՝ ամբողջովին ընդունելով Մ. Արեղյանի այն կարծիքը, որ «հայրեններ»-ը Քուլակին վերագրելն արդյունք է թյուրիմացության, իսկ այժմ և այսուհետև առնվազն անիմացության»²⁴։ Ահավասիկ, ի վերջո, և Մ. Արեղյանի կարծիքը. «Հայրենների այդ բոլոր հատկությունները մեզ բերում են այն հետևություն, որ դրանք բերանացի ավանդված տաղեր են եղել և մեկ ժամանակի ու մեկ ամհատի ստեղծագործություն չեն, այլ ընդհանրապես դրանց վրա աշխատել են բազմաթիվ սերունդներ... Աշուղ Քուլակի անունն, ուրեմն, այդ տիպի տաղերի վրայից պետք է ջնջել և այդ տաղերն անանուն թողնել, մինչև որ ապագայում դրանցից մեկի

19 Կ. Կոստանյան, Նոր ժողովածու, պրակ Ա, Թիֆլիս, 1892, էջ 70։

20 Գ. Ասատուր, Սիրո երգիչ Ն. Քուլակի երգերը, Թիֆլիս, 1905, էջ 4։

21 Ա. Չոպանյան, Հայրեններու բուրաստանը, Փարիզ, 1940, էջ 59։

22 Ա. Չոպանյան, Հատընտիր էջեր Քուլակյան տաղաշարքեն, Փարիզ, 1926, էջ 6։

23 «Բազմավեպ», 1932, № 10—11, էջ 465։

24 Պ. Սևակ, Սայաթ-Նովա, Նրևան, 1963, էջ 138։

կամ մյուսի հեղինակը գուցե երևան գա...»²⁵ Սա 1940 թվականին էր, 1953 թվականին՝ շուրջ երկու տասնամյակ հետո, դրա վրա ավելացավ մի նոր, հզոր ալիք՝ Ա.ս. Մնացականյանի հոդվածը, որին 1971 թ. հաջորդեց նույն հեղինակի նոր հոդվածը²⁶, նվաճա անցել է ևս մեկ տասնամյակ, բայց սալը տեղից չի շարժվում:

Ինչու՞մն է բանը: Մի՞թե համոզիչ չեն վերը հիշված բանասերների փաստարկները: Համոզիչ են և ավելի քան համոզիչ, բայց ահա մի ինչ-որ անբացատրելի, անիմանալի անտարբերություն մե տնավարության մե հանդուրժվում է երևույթը, որ իսկապես ասած շատ է անհանդուրժելի: Նվ եթե այսօր այդ բանը չարվի, միևնույն է վաղը, մյուս օրը, մեկ տարի, երկու տարի, տասը տարի հետո արվելու է: Նվ միջնադարյան մեր հայրենիները կգտնեն իրենց տեղը, Քուչակն էլ իր տեղը, Նահապետ Քուչակն, իրոք, նշանավոր աշուղ է եղել և ստեղծել է իր ապրած դարին համապատասխան բարձրարժեք աշուղական երգեր, միայն թե՛ ժամանակին ընդունված և սովորույթ դարձած թուրքերեն լեզվով:

Այդ երգերը տաղաչափված են աշուղական արվեստի վերին նորմերով և նյութի գերազանց իմացությամբ: Նրեում է, որ Քուչակն իր ժամանակի կերթված, բազմակողմանիորեն զարգացած մարդկանցից է եղել: Իմացել է արևելքի երեք նշանավոր լեզուներն էլ, մինչև վերջին թիվը յուրացրել է Ղուրանն ու Աստվածաշունչը, ուսումնասիրել է հարևան ժողովուրդների պատմությունն ու մշակույթը, դիցաբանությունն ու ֆոլկլորը: Դժվար չէ այդ բանում համոզվել՝ ժանոթանալով Քուչակի անվամբ մեզ հասած այն մի քանի երգերի հետ, որ գրի են առել Նդիա (Կարենցի) Մուշեղյան-Աստվածատրյանցը 1721—1724 թթ. Թավրիզում և անանուն այլ գրիչներ՝ Վասպուրականում և այլուր²⁷: Դրանք միայն ժամանակին լայն տարածում գտած պարզունակ զոլմաներ չեն, այլ նաև բարոյախրատական, կրոնական և սիրային թեմաներով հորինված բազմատուն խրթնաբան քերթվածներ, որոնցից յուրաքանչյուրը իր մասին խոսել է պարտադրում:

Երկու խոսք էլ աշուղների, ավելի ճիշտ աշուղական երգերի ու հայրենների կապի մասին առհասարակ: Մեր կարծիքով աշուղները ոչ մի կապ չունեն հայրենների հետ: Ուրիշ են հին ու միջնադարյան գուսանները, որոնք կարող էին առնչվել հայրեններին, այնքանով, որ հայրենները ոչ միայն անանուն ու անհայտ երգիչների, տաղասացների ու պրոֆեսիոնալ երգիչ-երգասացների, այլև վաղ շրջանի գուսանական ստեղծագործություններ են՝ մի ինչ-որ կայուն պոետական չափի կամ կայուն երաժշտական միավորի վրա ձևված, այդ պատճառով էլ հենց այնքան միատարր և միանման: Աշուղական չափերն ու գրելաձևը կամ ոճը ամենահեռավոր աղերս իսկ չունեն հայրենների հետ: Ահա թե ինչու աշուղ Նահապետ Քուչակն ու հայրենները իսկ որ հակոտնյաններ են, փոխադարձաբար միմյանց բացառող: Հայրենները բացառապես տոհմիկ, ազգային ստեղծագործություններ են՝ բանաստեղծական-տաղաչափական խիստ քնդգծված ինքնատիպությամբ, մինչդեռ աշուղական պոեզիան իր տաղաչափական կառուցվածքով մասամբ փոխառյալ է և ընդհանրական հարևան արեւելեկյան ժողովուրդների նույն ժանրի ստեղծագործությունների հետ: Արևելյան այդ ժողովուրդներից յուրաքանչյուրն էլ իր հերթին ունի իր ինքնուրույն

25 Մ. Ա. Ե. Ղ. յ. ան, Երկեր, հ. Բ, Երևան, 1967, էջ 23:

26 «Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության» (հոդվածների ժողովածու), Երևան, 1971, էջ 96—126:

27 Քուչակին վերագրված ալիքի աշուղական երկու այլ թուրքերեն երգեր էլ (ԵՊարալի բիւրուլ» և «Բենդի-մահու») 1917 թ. Աշտարակում, խառնակոնիսի վարպետ Ղազարից, գրառել է վասպուրականցի բանասեր Զ. Աճեմյանը (տե՛ս վերջինիս «Մտաղաքաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահյուսության» ժողովածուն, էջմիածին, 1917, էջ 94—95):

ազգային-ժողովրդական երգատեսակը, որ, տվյալ ժողովրդի սեփականությունը լինելով, նրա անունն էլ կրում է սովորաբար (բայց ոչ միշտ, իհարկե), ինչպես մերը՝ հայրեն, թուրքինը՝ թյուրքի, իսկ ասենք ադրբեջանականը՝ բայաթի, ռուսականը՝ շաստուշկա: Ինչպես այս վերջինը չի կարելի նույնացնել, ասենք, հայ ժողովրդական խաղիկների կամ ադրբեջանական բայաթիների հետ, այդպես էլ (և դեռ ավելի) մեր հայրենները համեմատության եզր չունեն ոչ թյուրքի կոշած թուրքական երգերի և ոչ էլ, ասենք, ռուսական շաստուշկաների հետ: Նույն կերպ և հակառակը՝ քիչ է զանազանությունը մեր և ադրբեջանական, մեր և թուրք աշուղական պոեզիայի միջև՝ մանավանդ պոետիկական-տաղաչափական առումով: Այս նկատի առնելով է, որ Քուլակին հայրենների հեղինակ համարող բանասերներն անգամ, մինչև օրս, Քուլակի աշուղական տաղերից ոչ մեկը չեն զետեղել նրա անվամբ հրատարակած ժողովածուների մեջ:

Ի մի բերելով վերագրյալը, կարող ենք ասել՝ հայրենները հայրենականն են, աշուղականը՝ օտարամուծ, հայրենները միայն մերն են, աշուղականը՝ նաև մերը: Իսկ թե որքան ինքնուրույն և միասնական են աշուղական երգերն ու հայրենները առանձին-առանձին, երևում է ամենաթեթև համեմատությունից անգամ: Եթե աշուղական երգերը հիմնականում բարոյախրատական, սիրալին, կրոնական և հայրենասիրական բովանդակություն ունեն, ապա հայրենները մեծ մասամբ առօրյա, կենցաղային, սիրո և ուրախության երգեր են: Պատահում են, իհարկե, նաև խրատական, կրոնական և պանդխտության թեմաներով հայրեններ: Բայց այս վերջինն, օրինակ, գրեթե անհաղորդ է աշուղական պոեզիային: Այս դեռ նյութի, բովանդակության առումով Տարբերությունն այդ երկու ժանրերի միջև ավելի զգալի է պոետիկական-տաղաչափական առումով: Աշուղական երգերն ունեն շատ ավելի ժողովրդամոտ, դիդակտիկախրատական բնավորություն, հորինվում են հեղինակային օժտվածությամբ բացարձկող գեղարվեստական ամենատարբեր մակարդակներով ու բառ ու բանով և բնավ ենթակա չեն փոփոխության, որովհետև անմիջապես գրավում են դավթարներում կամ փոխանցվում բերնբերան, իսկ հայրենները մի տեսակ կոլեկտիվ ստեղծագործական բնույթ են կրում և մշտապես ենթակա են փոփոխման կամ կատարելագործման: Աշուղական երգերը հորինվում և տարածվում են նախ հեղինակների և ապա միայն հետագա կատարողների միջոցով, իսկ հայրենները, լինելով անհասցե ու անհեղինակ, կատարվում են (իսկ երբեմն էլ մշակվում) բացառապես ուրիշների ջանքերով: Հիրավի՝ հանձին աշուղական երգերի ու հայրենների, մենք գործ ունենք ժանրային առումով միանգամայն տարբեր և ալլասեռ ստեղծագործությունների հետ, որոնց չէ թե նույնացնել, շփոթել էլ կարելի չէ:

Որոշակի երևում է նաև, որ Նահապետին վերագրվող հայրենն երկու թե երեք երգերը իրենը չեն: Դրանք, ինչպես վերը ասացինք, իցե թե թող կամ ծուռ Քուլակի գործերը լինեն՝ գրված Նահապետից 3—4 սերունդ հետո՝ այդ պատճառով էլ հայրեն և միանգամայն այլ ոճով ու խորքով: Թուղ կամ ծուռ Քուլակի աշուղ-բանաստեղծ լինելու մասին հիշատակարանում, իհարկե, ոչինչ չկա: Բայց, ինչպես նշեցինք, Տեկանցը, ոչ առանց հիմքի, նրա մասին գրում է. «...սույն վերջին Քուլակ աշուղն ունի շատ երգեր, որ պատեհություն չունեցանք ձեռք բերել այս անգամիս»: Այս կերպ մենք ունենում ենք իրոք երկու Քուլակ, մեկը Նահապետ, մյուսը թուղ կամ ծուռ: Մեկը ոչ թե շարքային, այլ կարկառուն մի դեմք է և հիմնադիր աշուղատիպ պոեզիայի (թող որ ալլաբեզու), իսկ մյուսը՝ ավելի ուսյալ և այդ պատճառով էլ ոչ թե աշուղ, այլ տաղասաց-երգահան, բայց բնավ էլ ոչ ավելի ինքնատիպ և ուղադրավ, քան իր հրուշակավոր նախնին, որին հենց ինքը վարպետ է կոչում, հավաստելով մի տեսակ նրա շուրջ ստեղծված ավանդություններն ու առասպելները: Մնում է վերըստին ընդգծել, որ եթե Նահապետը թուրքերեն և միայն թուրքերեն խաղերի հեղինակ է, ապա թուղ կամ ծուռ՝ հայերեն: Որքան էլ պապին սազ կգար, բայց այս վերջինս է իր մասին ասել՝

Լցեր եմ հարիւր տարին,
էլ չի գար մտքիկս ի վերայ...

Թոռ Քուչակն ստեղծագործական իր աշխարհով, նախասիրություններով դուրս է մնում աշուղական պոեզիայի պատմությունից, այդ պատճառով մենք նրա ստեղծագործությանը չենք անդրադառնա: Իսկական աշուղը և հայրենների կարծեցյալ հեղինակը նահապետն է: Եվ ի վերջո՝ հայրենները ժանրային, պոետիկական առումով ավելի հարմար կգային կրտսեր Քուչակին²⁸, բայց, ավաղ, այս վերջինս ապրել և ստեղծագործել է... XVII դարում, դեպի տեր հայրենները, եթե կամենան էլ, ձգվել չեն կարող:

КТО ЖЕ, НАКОНЕЦ, НААПЕТ КУЧАК?

ШАВИГ ГРИГОРЯН

Р е з ю м е

Наапет Кучак—один из основоположников армянской ашугской литературы—является первым из армянских ашугов (М. Абега), которому впоследствии без всякого основания Аристакес вардапет Тевкани приписал средневековые айрены.

В действительности же Наапет Кучак не имеет никакого отношения к этим народным песням средневековья (XI—XII века), которые принадлежат неизвестным и безымянным авторам и являются народно-гусанскими творениями. Под именем Кучака до нас дошло около одного десятка ашугских песен на турецком языке, написанных армянскими буквами, принадлежность которых его перу не вызывает никакого сомнения.

28 Ի դեպ, նա ստեղծագործել է հայրենների շափով և նմանողությամբ: